

տեսակէտից: Ներկայումս Ռուսաստանում երկաթուղիայարաններում կայ 117 եկեղեցի և 10 եկեղեցի-վաղօն: Բայց այսքան լայնածաւալ Ռուսաստանի համար շատ անբաւարար է, քանի որ խուլ անկիւններում գտնւող հազարաւոր կայարաններ կան, որոնց ծառայողներն ու բանւորները իրենց կրօնական կարիքները ծարաւը յագեցնելու տեսակէտից շատ անմխիթար վիճակի մէջ են գտնւում: Ահա այս կարիքը բաւարարելու անհրաժեշտութիւնն է, որ զրդել է ճ. հ. նախարարութեանը իր յիշեալ նախագիծը կազմելու:

### ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՅՑԻ

Նոր կաթոլիկ եպիսկոպոս Անիսիվարիում.

Աինչև այժմ, որ Չերնոգորիայի և Վատիկանի միջև մեծ տարաձայնութիւններ կային Չերնոգորիայում կաթոլիկ եպիսկոպոս նշանակելու առթիւ, արդէն լուծուին է ստացել այդ խնդիրը և Չերնոգորիայի Նիկողայոս Դարբիդշիչ քահանան (ղոհոր) Վատիկանից նշանակուել է Չերնոգորիայում եպիսկոպոս:

Պիոս X պապի նոր կարգադրութիւնը Գերմանիայի կաթոլիկների վերաբերմամբ.

Վաղուց է, որ Պապը և գերմանական կառավարութիւնը միմիանց վերաբերմամբ անհաշտ զրութեան մէջ են: Յաճախ են պատահել, որ գերմանական կաթոլիկների վերաբերմամբ արած Պապի կարգադրութիւնները կառավարութեան իրաւունքների սահմանափակումն են համարուել և վերջինիս կողմից սանկցիա չեն ստացել: Նոյն վիճակին է ենթարկուել նաև պապի վերջին ժամանակներս արած մի նոր կարգադրութիւնը *motu proprio*,

որով արդեւու՞մ է հոգեւորականներին մարմնաւոր դատի ենթարկելը: Սակսոնիայում նայիտնալ լիբերալներէ կողմից motu proprio-ի առթիւ հարցապնդում է արուել պարլամենտին և դաւանութիւնների մինիստր Բէկկ իւր պատասխանի մէջ վճռականօրէն յայտնել է, որ յիշեալ օրէնքը բացարձակապէս դէմ է գերմանական սահմանադրութեան ոգուն: որով և ընդ միշտ անգործադրելի պիտի համարել: Վատիկանը համոզուելով որ իւր ցանկութիւնը չի իրագործուելու Գերմանիայի սահմաններում և միւնոյն ժամանակ աշխատելով իր հեղինակութիւնը բարձր պահել շտապել է «Osservatore Romano» թերթի մէջ ոչ պաշտօնական կերպով յայտարարել, թէ այնուամենայնիւ Պապի կարգադրութիւնը, որ կանոնական իրաւունքի սկզբունքն է շօշափում, կմնայ կաթոլիկ քրիստոնէի խղճի համար որպէս մի անհրաժեշտ պարտականութիւնը. (II. B.)

### ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ—ԼԻԻՏԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Սակսոնակի աւետարանական Լիւտերական եկեղեցու ս. Սինօդը վերջին տարիներս շատ էր զբաղու՞մ կրօնի դասաւանդման խնդրով, և այս առթիւ նա անցեալ սեպտեմբերի իւր մի նիստում վերջնական եզրակացութեան է եկել: Նրա կարծիքով ժողովրդական դպրոցները միայն այն ժամանակ կարող են իրենց վրայ զբաժ պարտականութիւնը կատարել՝ կազմակերպել երեխաների մտքը, կամքն ու զգացմունքը, երբ կրօնական—բարոյական կրթութեանը նոյն չափ տեղ կտան, որչափ հոգեկան այլ կողմերի կրթութեանը: Իսկ կրօնական—բարոյական կրթութիւնը տեղին և նպատակայարմար կլինի միայն այն ժամանակ, երբ նա կգործադրուի համաձայն եկեղեցու հիմնական ուսմունքի:

Սինօդը իւր այս եզրակացութիւնը յայտարարել է Սակսոնիայի բոլոր ուսուցիչներին: Միւնոյն ժամանակ Սինօդը իւր կողմից անհրաժեշտ է համարել յայտարարել